**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՌԱՏԱՁԵՌՆ, ԱՆԿԵՂԾ (*haplotēs*)**
**SPECIAL TOPIC: GENEROUS/SINCERE (*haplotēs*)**

Այս տերմինը (*haplotēs*) ունի երկու նշանակություն՝ «առատաձեռն» կամ «անկեղծ»: Այն տեսողության հետ կապված փոխաբերություն էր: ՀԿ-ում աչքը երկու կերպով օգտագործվում է որպես շարժառիթի համար փոխաբերություն:

1. չար աչք (ժլատ, տես՝ 2 Օրինաց 15:9 և Առակ. 23:6, 28:22)
2. բարի աչք (առատաձեռն, տես՝ Առակ. 22:9)

Հիսուսը հետևեց այս կիրառությանը (տես՝ Մատթ. 6:22-23, 20:15):

Պողոսն այս տերմինը երկու իմաստով է գործածում՝

1. «պարզություն, անկեղծություն, մաքրություն» (տես՝ 2 Կորնթ. 1:12, 11:3, Եփես. 6:5, Կող. 3:22):
2. «առատաձեռնություն, ազատականություն» (տես՝ Հռոմ. 12:8, 2 Կորնթ. 8:2, 9:11,13):